

# Մանուկներու Սուրբ Գիրքը կը ներկայացնէ

## Երեմեայ, արցունքներու մարդը



Written by: Edward Hughes  
Illustrated by: Jonathan Hay

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian  
Adapted by: Mary-Anne S.

Story 28 of 60

[www.M1914.org](http://www.M1914.org)


Bible for Children, PO Box 3, Winnipeg, MB R3C 2G1 Canada

License: You have the right to copy or print this story, as long as you do not sell it.


Հայերէն

Armenian

Երեմեայ ծնաւ կրօնասէր տան մը մէջ Jadah թագաւորութեան սահմաններէն ներս: Իր հայրը, Քեղկիա, քահանայ էր: Անոնք կ'ապրէին Անաթովթ քաղաքին մէջ, Երուսաղէմի մօտերը, թերեւս Երեմեային ծնողքը մտածեց, թէ ինքն ալ քահանայ կ'ըլլայ: Սակայն Աստուած տարբեր ծրագիրներ ուներ:




1



Երեմիայի ծննդեան ատեն, Աստուծոյ ժողովուրդը անգամ մը եւս Աստուծոյ Խօսքին չէր հնազանդեր: Մտաւորապէս բոլորը թագաւորէն միևնույն ամենապարզ բանտուրը, կուռքեր եւ սիսալ ասուածներ կը պաշտէին, նոյնիսկ Աստուծոյ սուրբ տաճարին մէջ:


2

Երբ Երեմիա երիտասարդ մարդ եղաւ, Աստուած խօսեցաւ իրեն. "Ես գիտեմ քեզի նախքան քու ծնունդդ", ըսաւ Աստուած Երեմեային եւ ես ծրագրած եմ, "որ դուն ինծի համար խօսիս":



3

Աստուծոյ կանչը վախցուց Երեմեային: "Ա՛հ, Տէր Աստուած", պռռաց ան: "Ես չեմ կրնար խօսիլ, մանուկ եմ տակաւին": Ան մանուկէ աւելի պզտիկ էր տակաւին քսան տարեկան: Բայց Երեմեայ չէր մտածեր, որ ինք կրնայ խօսիլ ամբողջ չարութեան մասին, որ իր շուրջ տեղի կ'ունենար Աստուծոյ դէմ:



4

"Մի՛ վախնար", ըսաւ Աստուած Երեմեային. "Գնա՛ ուր որ ես քեզ կը դրկեմ: Ըսէ ինչ որ ես կ'ըսեմ քեզի:

Ես հետդ եմ եւ ես քեզի կը փրկեմ": Յետոյ Աստուած մասնաւոր բան մը ըրաւ: Աստուած դպաւ Երեմեայ բերնին:



5


Աստուած Երեմեայի տուաւ ուժ եւ արիւթիւն եւ խելացութիւն: Ան յանդգնութեամբ խօսեցաւ, յիշեցնելով ժողովուրդը, թէ Աստուած կը սիրեր իրենց եւ կ'ուզէր զիրենք օգնել: Բայց որեւէ մէկը

մտիկ չ'ըրաւ իրեն, Նոյնիսկ թագաւորը:




6

Նոյնիսկ քահանաները բարկացան եւ ստիպեցին իրեն, որ այլեւս չխօսի Աստուծոյ մասին: Կային նաեւ կեղծ մարգարէներ, որոնք կ'ըսէին, թէ Երեմեայի իրականութիւնը չի խօսիր:



7

Երեմեայի յիշեցուց ժողովուրդը, թէ հարիւր տարիներ առաջ, հիւսիսային Իսրայելի թագաւորութիւնը լքեր էր Աստուծոյ: Անոնց թշնամիները, ասորիները, գրաւեր էին հողը եւ Իսրայելի ժողովուրդը հեռացուցեր էին:



8




Հիմա Երեմեայի  
ժողովուրդը,  
հարաւային  
թագաւարութիւնը  
լքեր Եր Աստուծոյ:  
Թշնամի  
բանակները  
արդէն կը  
մօտենային:

9




Արդեօ՞ք Աստուած  
պիտի արտօնէր,  
որ անոնք Իր  
ժողովուրդին  
գրաւէին եւ  
աքսորէին:

10




Ժողովուրդը կուռքերուն կը վստահէր: Կրնայի՞ն  
կուռքերը ազատել իրենց թշնամիներէն:  
Ո՛հ: Միայն Աստուած կրնար փրկել  
զիրենք: Ժողովուրդը շատ զայրացաւ  
Երեմեայէն, եւ ծրագրեցին զայն  
մեռցնել: Բայց Աստուած  
ազատեց Իր ծառան:

11




Վերջապէս, Աստուած բան  
մը ըսաւ, որ զարմացուց  
Երեմեային: Աստուած  
ըսաւ. "Մի՛ աղօթեր այս  
ժողովուրդին: Ես իրենց  
մտիկ պիտի չընեմ  
երբ պոռան եւ Իմ  
օգնութիւնս  
խնդրեն":

12



Երեմեայ զգուշացուց  
թագաւորը, որ  
պատերազմը պիտի  
կորսնցնէ Բաբելոնի  
բանակին դէմ: Թագաւորը  
զայրացաւ եւ Երեմեային  
բանտարկեց: Նոյնիսկ  
բանտին մէջ, Երեմեայ  
շարունակեց քարոզել եւ  
վստահիլ Աստուծոյ:

13




Բանտէն ելլելէ  
ետք Երեմեայ  
Նորէն քարոզեց,  
որ թագաւորը եւ  
ժողովուրդը  
վերադառնան  
Աստուծոյ  
եւ Ասոր  
վստահին:

Այս անգամ  
թագաւորը  
Երեմեային  
ցեխոտ բանտի  
մը մէջ իջեցուց:


14

Սակայն Աստուած թագաւորին սրտին մէջ կ'աշխատէր: Ան գաղտնօրէն փրկեց Երեմեային եւ անոր հարցուց, թէ ինչ կ'ուզէր Աստուած, որ թագաւորը կատարէ.



15

"Գնայք Երուսաղէմէն մէջ եւ Աստուած կ'ըսէ պիտի ապրիս", այդ էր պատասխանը:



16

Բաբելոնեան բանակը գրաւեց Երուսաղէմը եւ ամբողջ Յուդան: Անոնք փլեցին պատերը եւ շէնքերը եւ այրեցին ամեն ինչ:



17

Աստուած ըսաւ իր ժողովուրդին, որ գերութեան պիտի երթան եօթնասուն տարիներ, եւ յետոյ Ան իրենց պիտի բերէ խոստացուած հողը:



18

Երեմեայ, արցունքներու մարդը

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,  
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Երեմեայ

"Ընու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"  
Սաղմոս 119:130

Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի հաշին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինծի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կէտնքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կէտնք մը ապրիլ, եւ օր մը հետոյ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինծի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:  
Յովհաննու 3:16

